ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 17/17.4/40223-2024 «25» 11 2024թ.

«ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ
(*Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մարգարյան փ. 45, բն. 105*)

Հարգելի պարոն Մկրտչյան,

Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կարիքների համար տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում) հրապարակված և «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում 2024 թվականի հոկտեմբերի 23-ին կնքվել է N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/3-1 ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման գնման պայմանագիր «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 01335288, այսուհետ՝ Ընկերություն) հետ, որի իրական շահառուն և 100 տոկոս բաժնեմասի սեփականատերը հանդիսանում է Հայկ Լիպարիտի Մկրտչյանը:

Պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) 2024թ. նոյեմբերի 21-ին վարչապետի աշխատակազմին է ներկայացրել N Ե/2709-24 գրությունը, որով մասնավորապես հայտնել է հետևյալը.

Ծառայությունը, վերլուծելով ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման տեղեկատվական բազայում առկա տեղեկատվությունը, պարզել է, որ Ընկերության, «Արմլյուքս» ՍՊ (ՀՎՀՀ՝ 00465515), «Սերվիս Ստեյշն» ՍՊ (ՀՎՀՀ՝ 00241595) և «Սպայդեր» ՍՊ (ՀՎՀՀ՝ 00245974) ընկերությունների միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝

Ծառայության կողմից մատնանշվել է այն փաստը, որ Ընկերության իրական շահառու և 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Հայկ Լիպարիտի Մկրտչյանի և «Սերվիս Ստեյշն» ՍՊ ընկերություն իրական շահառու և 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Էդգար Լիպարիտի Մկրտչյանի (ՀԾՀ՝ 502790513, անձնագիր՝ հ/հ 011230828, տրվել է

14.09.2021թ., 013-ի կողմից) միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ վերջիններս հարազատ եղբայրներ են (հայր՝ Սոս Լիպարիտի Մկրտչյան, մայր՝ Կարինե Համբարձումի Վարդանյան):

«Սպայդեր» ՍՊ ընկերության իրական շահառուն և 100 տոկոս բաժնեմասի սեփականատերն է Արմինե Լևոնի Մխոյանը (ՀԾՀ՝ 6414850624, անձնագիր՝ հ/հ 008797227, տրվել է 02.06.2016թ., 001-ի կողմից), ով Էդգար Լիպարիտի Մկրտչյանի կինն է:

«Արմլյուքս» ՍՊ ընկերության իրական շահառուն և 100 տոկոս բաժնեմասի սեփականատերն է Նարինե Գաբրիելի Ավետիսյանը (ՀԾՀ՝ 6101910199, անձնագիր՝ AR0676536, տրվել է 02.05.2018թ., 012-ի կողմից), ով Հայկ Լիպարիտի Մկրտչյանի կինն է:

Իրականացված վերլուծությամբ արձանագրվել է նաև, որ Տեղեկագրում հրապարակված գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակի համաձայն՝ «Սերվիս Ստեյշն» ՍՊ ընկերությունը և «Սպայդեր» ՍՊ ընկերությունը համապատասխանաբար 2023 թվականի մարտի 7-ից մինչև 2025 թվականի ապրիլի 14-ը և 2023 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 22-ը ներառված են գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ (...) գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից(...):

Նույն կետի իմաստով *ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, ամուսինը, ամուսնու ծնողները, տատը, պապը, քույրը, եղբայրը, երեխաները, թոռները, քրոջ կամ եղբոր ամուսինն ու երեխաները*:

Ընդ որում, Կարգի 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է *վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:*

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:

Համադրելով Ծառայության գրությամբ ներկայացված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ արձանագրում ենք, որ.

ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/3-1 ծածկագրերով գնանշման հարցման շրջանակներում Ընկերության հայտով ներկայացված հավաստումն առ այն, որ «ՖԱՍՏ ԳԼՈԲԱԼ ՍՈԼՈՒՇՆՍ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին (մասնավորապես, Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում), չի համապատասխանել իրականությանը, քանի որ Ընկերության իրական շահառու և 100 տոկոս բաժնեմասի սեփականատեր Հայկ Մկրտչյանի և համապատասխանաբար 2023 թվականի մարտի 7-ից մինչև 2025 թվականի ապրիլի 14-ը և 2023 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 22-ը «սև ցուցակում» ներառված «Սերվիս Ստեյշն» և «Սպայդեր» ՍՊ ընկերությունների իրական շահառու և 100 տոկոս բաժնեմասի սեփականատերեր Էդգար Լիպարիտի Մկրտչյանը և Արմինե Մխոյանը փաստացի հանդիսանում են վերջինիս հետ փոխկապակցված անձինք, որպիսի հանգամանքը ինքնաբերաբար հանգեցնում է Ընկերության գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Հետևաբար, Ընկերությունը՝ գնման գործընթացի շրջանակներում ներկայացնելով ***իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն***՝ խախտել է իր իսկ կողմից ստանձնված պարտավորությունը, որը մինչև Ընկերության հետ պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում ***հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:***

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով՝ վարչապետի աշխատակազմը միակողմանի լուծում է Ընկերության հետ 2024 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/3-1 պայմանագիրը:

Միաժամանակ հայտնում եմ, որ վարչապետի աշխատակազմը օրենքով սահմանված կարգով կձեռնարկի միջոցներ՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը լիազորված մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Ընդ որում, «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-25/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.14 կետի համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից բացված համապատասխան գանձապետական հաշվեհամարին փոխանցելու համար:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն ծանուցմամբ պատվիրատուն ապահովել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված պահանջի կատարումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ

Կատարող՝ Լուսինե Գասպարյան
Գործերի կառավարչի տեղակալ
Հեռ. 515663
Էլ փոստ՝ lusine.gasparyan@gov.am